Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
օգոստոսի 28-ի N 1241-Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2011 թվականի N 1024-Ն

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 2-րդ, 3-րդ, 8-րդ, 14-րդ, 17-րդ և 18-րդ մասերի, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 3-րդ մասի, 27-րդ հոդվածի 2-րդ և 9-րդ մասերի, 5-րդ մասի 2-րդ կետի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով սահմանված լիազոր մարմինը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունն է:

2. Հաստատել՝

1) առողջարանային բուժման նպաստի իրավունք տվող հիվանդությունների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) նպաստ նշանակելու, հաշվարկելու և վճարելու (այդ թվում՝ վարձու աշխատողի գործատուի կողմից) համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները)

լիազոր մարմնի կողմից վարվող տեղեկատվական համակարգի, էլեկտրոնային առողջապահության համակարգի և հարկային մարմնի կողմից վարվող տեղեկատվական բազայի միջև փոխանակելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) նպաստ նշանակելու, հաշվարկելու և վճարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները) լիազոր մարմնի կողմից վարվող տեղեկատվական համակարգի, էլեկտրոնային առողջապահության համակարգի և հարկային մարմնի կողմից վարվող տեղեկատվական բազայի միջև փոխանակվող տեղեկատվության (տվյալների) կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված անձի ժամանակավոր անաշխատունակ լինելը հաստատող փաստաթղթի հիման վրա անձի ժամանակավոր անաշխատունակության վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի տված թույլտվության հիման վրա էլեկտրոնային առողջապահության համակարգ ներառելու կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության կամ դատական ակտի հիման վրա կամ անձի մահվան դեպքերում ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման կարգը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) վերահաշվարկված նպաստի ավել վճարված գումարը գործատուի կողմից պետական բյուջե վերականգնելու կարգը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) լիազոր մարմնի կողմից վարվող տեղեկատվական շտեմարան ներառվող տվյալների կազմը՝ համաձայն N 8 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Տուբերկուլյոզ
2. Հետինֆարկտային վիճակներ
3. Ստամոքսի, տասներկումատնյա աղիքի հետվիրահատական վիճակներ:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂԻ ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ) ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՏՎՅԱԼՆԵՐԸ) ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստը և մայրության նպաստը (այսուհետ՝ երկուսը միասին՝ նպաստ) նշանակելու, հաշվարկելու և վճարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները) լիազոր մարմնի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կողմից վարվող տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ծառայության տեղեկատվական համակարգ), էլեկտրոնային առողջապահության համակարգի և հարկային մարմնի կողմից վարվող տեղեկատվական բազայի միջև (այսուհետ՝ հարկային մարմնի տեղեկատվական բազա) փոխանակելու կարգին առնչվող հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են օրենքով սահմանված իմաստով:

3. Նպաստ նշանակելու, հաշվարկելու և վճարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները) ծառայության տեղեկատվական համակարգի, էլեկտրո-

նային առողջապահության համակարգի և հարկային մարմնի կողմից վարվող տեղեկատվական բազայի միջև փոխանակվում են ինքնաշխատ եղանակով՝ տվյալների շտեմարանների փոխգործելիության միջոցով՝ օրենքով սահմանված ժամկետներում:

2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՏՎՅԱԼՆԵՐԸ) ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

4. Սույն կարգի շրջանակներում էլեկտրոնային առողջապահության համակարգից ծառայության տեղեկատվական համակարգ են փոխանցվում էլեկտրոնային առողջապահության համակարգում լրացված (բացված և փակված) էլեկտրոնային ժամանակավոր անաշխատունակության թերթիկում (այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ) առկա տեղեկատվությունը (տվյալները)՝ անձի ժամանակավոր անաշխատունակության (այսուհետ՝ անաշխատունակություն) մեջ գտնվելու վերաբերյալ:

5. Անաշխատունակության թերթիկները բացվում են օրենքով նախատեսված հետևյալ դեպքերում (պատճառներով)՝

1) հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած անաշխատունակության.

2) պրոթեզավորման պատճառով առաջացած անաշխատունակության.

3) առողջարանային բուժման անհրաժեշտության պատճառով առաջացած անաշխատունակության.

4) հղիության ու ծննդաբերության պատճառով առաջացած անաշխատունակության.

5) ընտանիքի անդամի հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտության.

6) մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքի համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել:

6. Քաղաքացու պահանջով էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկ բացած բժշկական կազմակերպությունը կարող է տրամադրել նաև այդ համակարգից տպված անաշխատունակության թերթիկի քաղվածքը, որը հաստատվում է տվյալ կազմակերպության կողմից:

7. Անաշխատունակության թերթիկների բացման (տրման) և ծառայության տեղեկատվական համակարգ փոխանցման՝ օրենքով և սույն կարգով սահմանված պահանջների կատարումն իրականացվում է էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով:

8. Էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկը, բացառությամբ սույն կարգի 9-րդ կետում նշված դեպքերի, բացվում է (անաշխատունակության թերթիկի բացման վերաբերյալ գրառումը էլեկտրոնային առողջապահության համակարգում կատարվում է) անաշխատունակության թերթիկ բացելու համար դիմելու օրը, որն էլ նպաստ նշանակելու համար անաշխատունակության առաջին օրն է: Հիվանդանոցային բժշկական հաստատության ցերեկային ստացիոնարում կամ ընդունարանի անհետաձգելի բուժօգնության բաժնում (Էմերջենսի) բժշկական օգնության և սպասարկման նպատակով բժշկական հաստատություն ընդունված 18 տարին լրացած քաղաքացու համար ժամանակավոր անաշխատունակության թերթիկը էլեկտրոնային առողջապահության համակարգում բացվում է նրա՝ հիվանդանոցային բժշկական հաստատություն դիմելու օրը:

9. Անաշխատունակության թերթիկը կարող է բացվել (անաշխատունակության թերթիկի բացման վերաբերյալ գրառումը էլեկտրոնային առողջապահության համակարգում կատարվել) մինչև անաշխատունակության թերթիկը բացելու համար դիմելու (անաշխատունակության թերթիկը բացելու) օրը (հետադարձով), եթե անաշխատունակությունն առաջացել կամ հաստատվել է՝

1) հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու հետևանքով՝ հիվանդանոցում գտնվելու առաջին օրվանից.

2) ոչ աշխատանքային օրվա ընթացքում կամ աշխատանքային օրվա ավարտից հետո՝ շտապ բժշկական օգնության ծառայություն դիմելու հիմքով, եթե քաղաքացին այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում առողջության

առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատություն է (որտեղ սահմանված կարգով գրանցված է) ներկայացնում առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված շտապ բժշկական օգնության ծառայության կանչի ընթացքում շտապ բժշկական օգնության բրիգադի բժշկի կողմից տրված հիվանդի առողջական վիճակի մասին տեղեկանքը (հիմք է ընդունվում տեղեկանքում նշված՝ շտապ բժշկական օգնության ծառայություն դիմելու ամսաթիվը).

3) օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված փաստաթղթի հիմքով, անաշխատունակության 1-ին օրվանից, անկախ դրա աշխատանքային կամ ոչ աշխատանքային լինելու հանգամանքից.

4) հղիության և ծննդաբերության պատճառով և, անկախ դիմելու օրվանից, որպես անաշխատունակության (հղիության՝ 70 օրացուցային օր և ծննդաբերության՝ 70 օրացուցային օր տևողությամբ արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի) սկիզբ նշվում է հղիության 210-րդ օրը: Եթե քաղաքացին անաշխատունակության թերթիկ ստանալու համար դիմում է հղիության արձակուրդի իրավունք ձեռք բերելուց (հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածը սկսելուց) հետո, ապա անաշխատունակության թերթիկում անաշխատունակության ժամանակահատվածի (հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի) սկիզբը մնում է անփոփոխ.

5) անաշխատունակության նույն դեպքի համար նախորդ անաշխատունակության թերթիկով, որում «Անաշխատունակության վերջը» սյունակում նշված օրվան հաջորդող օրը ոչ աշխատանքային օր է (այդ թվում՝ սույն կարգի 17-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված այն դեպքում, երբ հիվանդանոցային բժշկական հաստատությունից դուրս գրվելու օրվան հաջորդում է ոչ աշխատանքային օր) և հիվանդն այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում դիմում է առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատություն, ընդ որում, առողջության առաջնային

պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունում անաշխատունակության հաջորդ թերթիկը բացվում է «Անաշխատունակության վերջը» սյունակում նշված օրվան հաջորդող օրվանից (հիվանդանոցային բժշկական հաստատությունից դուրսգրման օրվան հաջորդող օրվանից).

6) անաշխատունակության նույն դեպքի համար նախորդ անաշխատունակության թերթիկով և անաշխատունակության ժամկետ երկարաձգելը թույլատրելու/չթույլատրելու ֆունկցիոնալության գնահատման որոշման (վարչական ակտի) «Գնահատման ամսաթիվը» մասի «ավարտ» տողում նշված օրը անաշխատունակության 90-րդ օրվանից հետո է:

10. Էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկը լրացվում է հայերեն, որտեղ նշվում են՝

1) անաշխատունակության թերթիկի նախնական համարվելը կամ շարունակություն լինելը.

2) անաշխատունակության թերթիկի սերիան և համարը.

3) անաշխատունակ անձի անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում).

4) ծննդյան օրը, ամիսը, տարին.

5) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

6) խնամքի անհրաժեշտության պատճառով առաջացած անաշխատունակության դեպքում՝ հիվանդի՝ սույն կետի 3-5-րդ ենթակետերում նշված տվյալները.

7) անաշխատունակության պատճառը.

8) հիվանդի ախտորոշումը՝ հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչով՝ նշելով միայն հիվանդության ծածկագիրը.

9) բուժման ռեժիմը (ստացիոնար կամ ամբուլատոր).

10) առկայության դեպքում՝ նշում ստացիոնար բուժման ռեժիմի խախտման մասին.

11) առկայության դեպքում՝ հիվանդին ֆունկցիոնալության գնահատման ուղեգրելու օրը, ամիսը, տարին.

12) անհրաժեշտության դեպքում՝ նշում՝ անաշխատունակության թերթիկը բացված է օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված՝ անձի անաշխատունակության ժամանակահատվածը հաստատող փաստաթղթի հիման վրա.

13) առկայության դեպքում՝ ֆունկցիոնալության գնահատման որոշումը (թույլատրվում է երկարաձգել կամ չի թույլատրվում երկարաձգել).

14) առկայության դեպքում՝ ֆունկցիոնալության գնահատման որոշումը ստանալու օրը, ամիսը, տարին.

15) անաշխատունակության սկիզբը (օրը, ամիսը, տարին).

16) անաշխատունակության վերջը (օրը, ամիսը, տարին).

17) անհրաժեշտության դեպքում՝ շարունակելի լինելը.

18) բանկի անվանումը (ընտրվում է ցանկից), որտեղից անձը ցանկանում է ստանալ պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվող նպաստի գումարը:

11. Եթե անաշխատունակության թերթիկը բացելուց հետո քաղաքացին դիմում է այն չեղարկելու համար՝ մնալով դեռևս անաշխատունակ, ապա բժշկական կազմակերպությունը բացված անաշխատունակության թերթիկը կարող է չեղարկել, եթե այն բացելուց հետո չի անցել 1 աշխատանքային օր: Անաշխատունակության թերթիկի չեղարկման մասին տեղեկատվությունը էլեկտրոնային առողջապահության համակարգից փոխանցվում է ծառայության տեղեկատվական համակարգ:

12. 15 օրվանից ավելի տևողությամբ ժամանակավոր անաշխատունակության դեպքում, անաշխատունակ անձի կամ նրան խնամող անձի պահանջով, յուրաքանչյուր 15-րդ օրվանից հետո ժամանակավոր անաշխատունակության փաստացի օրերի համար տրվում է անաշխատունակության թերթիկ՝ սույն կարգի 13-րդ կետով սահմանված կարգով:

13. Անաշխատունակության նույն դեպքի համար անաշխատունակության յուրաքանչյուր հաջորդ ժամանակահատվածի համար բացվող անաշխատունակության թերթիկում (անկախ բուժման ընթացքում սույն կարգում նշված բժշկական հաստատության փոփոխությունից) նշվում են նաև նախորդ անաշխատունակության

թերթիկի սերիան ու համարը, «Անաշխատունակության սկիզբը» սյունակում՝ նախորդ անաշխատունակության թերթիկի «Անաշխատունակության վերջը» սյունակում նշված օրվան հաջորդող օրը:

14. Ամբուլատոր պայմաններում բուժման անհրաժեշտության հետևանքով առաջացած անաշխատունակության դեպքում (այդ թվում՝ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի անհրաժեշտության դեպքում), էլեկտրոնային առողջապահության համակարգում քաղաքացու համար անաշխատունակության թերթիկը բացում են արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության (այսուհետ՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություն) բուժող բժիշկները:

15. Տնային կանչի կամ ամբուլատոր այցի հիման վրա անաշխատունակության թերթիկը բացվում է առավելագույնը 7 օրացուցային օրվա համար (անաշխատունակության 1-ին օրվանից մինչև 7-րդ օրացուցային օրը ներառյալ (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ դրան հաջորդող աշխատանքային օրը՝ ներառյալ)՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատության բուժող բժշկի կողմից, որից հետո անաշխատունակության ժամկետի յուրաքանչյուր երկարաձգում հիմնավորվում է տվյալ հիվանդության ընթացքի նկարագրությամբ, կատարված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների արդյունքներով:

16. Հիվանդանոցային պայմաններում բուժման անհրաժեշտության դեպքում հիվանդի համար (անվամբ) կամ հիվանդ երեխա խնամող անձի համար (անվամբ) բուժման ամբողջ ժամանակահատվածի համար բացվում է անաշխատունակության թերթիկ:

17. Հիվանդանոցային բժշկական հաստատությունից դուրս գրվելիս էպիկրիզի կամ «Հիվանդանոցային պայմաններում արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման քարտ»-ի քաղվածքի (եթե հիվանդը բժշկական օգնություն և սպասարկում է ստացել ընդունարանի անհետաձգելի բուժօգնության բաժնում (Էմերջենսի) հետ միասին ձևավորվում է էլեկտրոնային առողջապահության համակարգում

բացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, ընդ որում, անաշխատունակության թերթիկում որպես անաշխատունակության ժամանակահատվածի վերջին օր նշվում է (ժամանակավոր անաշխատունակության թերթիկը փակվում է)՝

1) դուրս գրվելու օրը, եթե հիվանդը դուրս է գրվել՝ էպիկրիզում «առողջացում» գրառմամբ, գործնականում առողջ է՝ լրիվ ապաքինվել է: Եթե «առողջացում» գրառմամբ դուրս գրվելիս հիվանդը կարիք ունի ամբուլատոր պայմաններում ևս մի քանի օր բուժումը շարունակելու կամ, բուժող բժշկի գնահատմամբ՝ միջավայրին հարմարվելու, ապա որպես անաշխատունակության ժամանակահատվածի վերջին օր կարող է նշվել առավելագույնը հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) դուրս գրվելու օրվան հաջորդող 3-րդ օրացուցային օրը.

2) դուրս գրվելու օրվան հաջորդող առավելագույնը՝ 7-րդ օրացուցային օրը, եթե հիվանդը դուրս է գրվել՝ էպիկրիզում «լավացմամբ» գրառմամբ և կարիք ունի հետագա վերականգնողական բուժման.

3) դուրս գրվելու օրը՝ կատարելով «Շարունակելի» նշումը, եթե հիվանդը.

ա. դուրս է գրվում էպիկրիզում «կարիք ունի բուժումը շարունակելու ամբուլատոր պայմաններում» գրառմամբ (միաժամանակ բուժող բժիշկը հիվանդին տեղեկացնում է դուրսգրման կամ հաջորդ օրը առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկին դիմելու անհրաժեշտության վերաբերյալ (տնային կանչի կամ ամբուլատոր այցի միջոցով) կամ

բ. տեղափոխման էպիկրիզով մեկ հիվանդանոցային բժշկական հաստատությունից տեղափոխվում է այլ հիվանդանոցային բժշկական հաստատություն՝ հիվանդանոցային պայմաններում (այդ թվում՝ ցերեկային ստացիոնարում) բուժումը շարունակելու նպատակով:»:

18. Եթե հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) դուրս գրվելու օրվանից հետո մինչև սույն կարգի 17-րդ կետում նշված՝ հիվանդանոցային բժշկական հաստատության (ստացիոնարի) կողմից անաշխատունակության թերթիկը փակելու օրն ընկած ժամանակահատվածում հիվանդի մոտ ի հայտ են գալիս հիվանդանոցային կամ հետհիվանդանոցային բուժման բարդություններով պայմանավորված ախտանիշներ, ապա ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական

հաստատության բուժող բժիշկն իրավասու է անաշխատունակության ժամկետը երկարաձգել սույն կարգի 15-րդ կետով սահմանված կարգով, իսկ հիվանդանոցային պայմաններում բուժումը շարունակելու դեպքում՝ անաշխատունակության ժամկետն իրավասու է երկարաձգել հիվանդանոցային բժշկական հաստատությունը: Այս դեպքում էլեկտրոնային առողջապահության համակարգում բացված անաշխատունակության թերթիկը լրացվում է, իսկ անաշխատունակության տևողությունը 15 օրացուցային օրվանից ավելի լինելու դեպքում այդ մասին էլեկտրոնային առողջապահության համակարգից ծառայության տեղեկատվական համակարգ փոխանցվում են՝ համաձայն սույն կարգի 12-րդ և 13-րդ կետերի:

19. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատության կողմից բուժում ստանալու դեպքում քաղաքացու (երեխայի) ախտաբանական վիճակի, դրա հետևանքների կամ բարդությունների վերացման օրն անաշխատունակության թերթիկը փակում է բուժող բժիշկը:

20. Էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկը փակելու դեպքում այդ մասին գրառումը էլեկտրոնային առողջապահության համակարգում կատարվում է փակելու օրը, որն էլ անաշխատունակության վերջին օրն է:

21. Անաշխատունակության թերթիկի լրացման և տրամադրման գործընթացի հսկողության համար պատասխանատու է բժշկական հաստատության տնօրենը կամ տնօրենի հրամանով նշանակված պատասխանատու անձը: Ամբուլատոր պայմաններում բացված անաշխատունակության թերթիկը երկարացնելու համար բժշկի կողմից սահմանված՝ հիվանդի բժշկական հաստատություն հերթական այցի օրը չներկայանալու դեպքում (բժշկական հաստատության բուժաշխատողի կողմից պատշաճ տեղեկացման պարագայում) անաշխատունակության թերթիկը բժիշկը փակում է նույն օրը, եթե չներկայանալու պատճառը հիվանդի վատառողջ լինելը չէ:

3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ (ՏՎՅԱԼՆԵՐԻ) ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (ՎՆԱՍՎԱԾՔԻ) ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

22. Հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած անաշխատունակության դեպքում վարձու աշխատողին էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկ բուժող բժիշկը բացում է հիվանդության (վնասվածքի) ամբողջ ժամանակաշրջանի համար՝ աշխատունակությունը կորցնելու օրվանից մինչև դրա վերականգնումը:

23. Տևական հիվանդության նույն դեպքում, բացառությամբ անձի առողջական վիճակի վերականգնման հեռանկարի բացակայություն ունեցող հիվանդության, եթե հիվանդի առողջական վիճակը դեռևս չի վերականգնվել, անաշխատունակության ժամկետը երկարաձգելու նպատակով բուժող բժիշկը հիվանդին ֆունկցիոնալության գնահատման է ուղեգրում անաշխատունակությունն սկսվելու (անկախ անաշխատունակության նախորդ թերթիկն (թերթիկներն) այլ բուժող բժշկի կողմից բացված լինելու հանգամանքից) 75-րդ օրվանից մինչև 80-րդ օրը (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ դրան հաջորդող աշխատանքային օրը)՝ ներառյալ:

24. Սույն կարգի 23-րդ կետում նշված դեպքում, երբ բուժող բժիշկն ուղեգրել է սխալ ընթացակարգով (օրենսդրությամբ սահմանված պահանջների, այդ թվում՝ ժամկետների խախտմամբ), ապա այդ մասին հիվանդի՝ սույն կարգի 23-րդ կետում նշված դիմումը մուտքագրվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ֆունկցիոնալության գնահատման e-disability համակարգից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով բուժող բժիշկը ստանում է հաղորդագրություն՝ ուղեգրումը մերժելու պատճառների մասին: Սույն կետում նշված դեպքում բուժող բժիշկը հիվանդին կրկին կարող է ուղեգրել ֆունկցիոնալության գնահատման սույն կետում նշված հաղորդագրությունը ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում:

25. Անաշխատունակության ժամկետը երկարաձգելու նպատակով հիվանդին ֆունկցիոնալության գնահատման ուղեգրելու օր է համարվում հիվանդի համապատասխան դիմումը անձի ֆունկցիոնալության գնահատման e-disability համակարգ

մուտքագրելու օրը (ֆունկցիոնալության գնահատման որոշման (վարչական ակտի) «Գնահատման ամսաթիվը» մասի «սկիզբ» տողում նշված օրը, ամիսը, տարին):

26. Եթե ֆունկցիոնալության գնահատման որոշմամբ (վարչական ակտով) թույլատրվել է երկարաձգել անաշխատունակության ժամկետը, ապա անաշխատունակության թերթիկում նշված ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը ևս 3 ամիս ժամկետով՝ սկսած անաշխատունակության 91-րդ օրվանից:

27. Եթե ֆունկցիոնալության գնահատման որոշմամբ (վարչական ակտով) չի թույլատրվել երկարաձգել անաշխատունակության ժամկետը, ապա անաշխատունակության թերթիկը փակվում է՝

1) ֆունկցիոնալության գնահատման որոշման (վարչական ակտի) «Գնահատման ամսաթիվը» մասի «ավարտ» տողում նշված օրվանից հետո՝ մինչև անաշխատունակության 90-րդ օրը լրանալը՝ անաշխատունակությունը վերականգնվելու օրը.

2) ֆունկցիոնալության գնահատման որոշման (վարչական ակտի) «Գնահատման ամսաթիվը» մասի «ավարտ» տողում նշված օրը, ամիսը, տարին, եթե այն անաշխատունակության 90-րդ օրվանից հետո է:

28. Անձի ֆունկցիոնալության գնահատման e-disability համակարգից էլեկտրոնային առողջապահության համակարգ է փոխանցվում (նշվում է անաշխատունակության թերթիկում) ֆունկցիոնալության գնահատման որոշման (վարչական ակտի) քաղվածքը, որում ներառվում են ֆունկցիոնալության գնահատման որոշման (վարչական ակտի)՝

1) «Գնահատման ամսաթիվը» մասի «սկիզբ» տողում նշված օրը, ամիսը, տարին.

2) «Գնահատման ամսաթիվը» մասի «ավարտ» տողում նշված օրը, ամիսը, տարին.

3) գնահատման արդյունքները՝ ֆունկցիոնալության սահմանափակման միավորը և անաշխատունակության ժամկետը երկարաձգել թույլատրելը/չթույլատրելը:

29. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի համար հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկ բացվում է միայն հիվանդանոցային բժշկական

հաստատությունում (ստացիոնարում) բուժման ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց մեկ օրացուցային տարվա ընթացքում 60 օրացուցային օրվանից ոչ ավելի:

30. Հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած անաշխատունակության դեպքում, եթե բուժումն իրականացվում է ամբուլատոր պայմաններում, անաշխատունակության թերթիկը բացվում է անձին առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատության կողմից:

31. Առողջարանային բուժման նպաստի իրավունք տվող հիվանդությունների ցանկում ներառված հիվանդությունների հետևանքով հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան՝ լիաբուժման ուղեգրվելու դեպքում անաշխատունակության թերթիկում դրա մասին կատարվում է նշում:

4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ (ՏՎՅԱԼՆԵՐԻ) ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (ՎՆԱՍՎԱԾՔԻ) ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

32. Ընտանիքի անդամի հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտության դեպքում՝ խնամող անձի համար (անվամբ) անաշխատունակության թերթիկ բացում է խնամող անձին սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունը, եթե հիվանդին բուժող բժշկի եզրակացության համաձայն՝ հիվանդն ունի խնամքի կարիք:

33. Ընտանիքի հիվանդ անդամի խնամքի դեպքում վարձու աշխատողի համար անաշխատունակության թերթիկ է բացվում՝

1) տնային (ամբուլատոր) պայմաններում ընտանիքի հիվանդ չափահաս անդամի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 7 օրացուցային օրվանից ոչ ավելի.

2) տնային (ամբուլատոր) պայմաններում հիվանդ երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 24 օրացուցային օրվանից ոչ ավելի, իսկ վարակիչ հիվանդությունների պատճառով երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 28 օրացուցային օրվանից ոչ ավելի.

3) հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու դեպքում՝ հիվանդանոցում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար.

4) մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամություն ունեցող երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելու դեպքում՝ երեխայի առողջարանային բուժման ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ուղեգրում նշված ժամանակաշրջանից ոչ ավելի, ընդ որում, նպաստ է տրվում օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ.

5) մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխայի՝ տնային (ամբուլատոր) պայմաններում խնամքի համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել, համապատասխան բժշկական փաստաթղթի առկայության դեպքում անաշխատունակության թերթիկ է բացվում երեխայի խնամքն իրականացնող վարձու աշխատողի անվամբ, երեխայի մոր (խնամակալի, հոգաբարձուի) հիվանդության կամ նրա՝ հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար: Այս դեպքում երեխայի խնամքն իրականացնող վարձու աշխատողի համար անաշխատունակության թերթիկը բացում է երեխային առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունը՝ հիմք ընդունելով սույն ենթակետում նշված՝ երեխայի մոր (խնամակալի, հոգաբարձուի) առողջական վիճակի մասին բժշկական փաստաթուղթը կամ երեխայի մոր՝ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու վերաբերյալ բժշկական փաստաթուղթը:

34. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին ընտանիքի հիվանդ անդամի խնամքի դեպքում անաշխատունակության թերթիկ է բացվում՝

1) հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու դեպքում՝ հիվանդանոցում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար.

2) մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամություն ունեցող երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելու դեպքում՝ երեխայի առողջարանային բուժման ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ուղեգրում նշված ժամանակաշրջանից ոչ ավելի, ընդ որում, նպաստ է տրվում օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ:

5. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ (ՏՎՅԱԼՆԵՐԻ) ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

35. Հղիության և ծննդաբերության դեպքում անաշխատունակության թերթիկը էլեկտրոնային առողջապահության համակարգում բացում է կանանց կոնսուլտացիաների բժիշկը, իսկ եթե այդպիսի բժիշկ չկա՝ ընդհանուր բժշկական հաստատությունների մանկաբարձ-գինեկոլոգը: Այդպիսի մասնագետներ չլինելու դեպքում անաշխատունակության թերթիկ է բացում ընդունելություն կատարող բժիշկը:

36. Հղիության և ծննդաբերության դեպքում անաշխատունակության թերթիկը վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի համար բացվում է հետևյալ տևողությամբ՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար՝ 140 օրացուցային օր (հղիության՝ 70 օրացուցային օր, ծննդաբերության՝ 70 օրացուցային օր).

2) հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար՝ 155 օրացուցային օր (հղիության՝ 70 օրացուցային օր, ծննդաբերության՝ 85 օրացուցային օր)՝ բարդ ծննդաբերության դեպքում.

3) հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար՝ 180 օրացուցային օր (հղիության՝ 70 օրացուցային օր, ծննդաբերության՝ 110 օրացուցային օր)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ծննդաբերելու դեպքում:

37. Հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկը բացվում և փակվում է նույն

օրը, իսկ բարդ ծննդաբերության և միաժամանակ մեկից ավելի երեխաներ ծննդաբերելու դեպքում, ըստ անհրաժեշտության, որպես 140 օրացուցային օր տևողությամբ բացված նախորդ անաշխատունակության թերթիկի շարունակություն, բացվում է նոր անաշխատունակության թերթիկ՝ համապատասխանաբար 15 և 40 օր տևողությամբ՝ անաշխատունակության թերթիկում նշելով նախորդ անաշխատունակության թերթիկի սերիան ու համարը:

38. Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողի, նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի, ինչպես նաև փոխնակ (սուրոգատ) մորից ծնված երեխայի կենսաբանական մոր անունով անաշխատունակության թերթիկ բացվում է միայն հետծննդյան արձակուրդի ժամանակաշրջանի համար՝ խնամակալ նշանակվելու կամ երեխա որդեգրելու, կամ փոխնակ (սուրոգատ) մորից երեխայի ծնվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը (երկու և ավելի նորածին որդեգրած կամ երկու և ավելի նորածնի խնամակալ նշանակված անձին, ինչպես նաև փոխնակ (սուրոգատ) մորից երկու և ավելի երեխա ծնվելու դեպքում երեխայի կենսաբանական մորը՝ մինչև նորածինների 110 օրական դառնալը):

39. Փոխնակ (սուրոգատ) մոր համար անաշխատունակության թերթիկ է բացվում սույն կարգի 36-րդ կետով սահմանված ժամանակաշրջանի համար:

40. Անաշխատունակության թերթիկով վավերացված՝ հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած անաշխատունակության ժամանակահատվածի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 180 օրացուցային օրը:

41. Փոխնակ (սուրոգատ) մորից ծնված երեխայի կենսաբանական մոր համար անաշխատունակության թերթիկը բացում է այն բժշկական կազմակերպությունը, որտեղ իրականացվել է փոխնակ մոր հղիության հսկողությունը (այն բժշկական կազմակերպությունը, որը պահանջն առաջանալու դեպքում անաշխատունակության թերթիկ է բացում փոխնակ մոր համար):

42. Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի համար

անաշխատունակության թերթիկ բացում է նորածնին առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունը:

43. Հղիության և ծննդաբերության դեպքում անաշխատունակության թերթիկում, որպես անաշխատունակության (հղիության՝ 70 օրացուցային օր և ծննդաբերության՝ 70 օրացուցային օր տևողությամբ արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի) սկիզբ նշվում է հղիության 210-րդ օրը:

44. Հղիության 154-րդ օրը և 154 օրվանից հետո՝ մինչև հղիության 209-րդ օրը ներառյալ, վաղաժամ ծննդաբերելու դեպքում անաշխատունակության թերթիկը բացվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակաշրջանի համար: Վաղաժամ ծննդաբերելու մասին անաշխատունակության թերթիկում կատարվում է նշում, որը փոխանցվում է ծառայության տեղեկատվական համակարգ:

45. Մինչև հղիության 154-րդ օրը և հղիության արհեստական (այդ թվում՝ բժշկական և սոցիալական ցուցումներով) կամ ինքնաբեր ընդհատման դեպքերում անաշխատունակության ամբողջ ժամանակաշրջանի համար բացվում է անաշխատունակության թերթիկ՝ հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկ բացելու համար սահմանված կարգով:

46. Այն դեպքում, երբ երեխան ծնվել է մահացած կամ մահացել է ծնվելուց հետո, անաշխատունակության թերթիկ է բացվում սույն կարգի 36-րդ և 44-րդ կետերի հաշվառմամբ:

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ (ՏՎՅԱԼՆԵՐԻ) ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԲՈՒԺՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐՈԹԵԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ

47. Առողջարանային բուժման անհրաժեշտության պատճառով առաջացած անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկ է բացվում միայն առողջարանային բուժման նպաստի իրավունք տվող հիվանդությունների ցանկում

ներառված հիվանդությունների հետևանքով հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան լիաբուժման ուղարկված կամ տուբերկուլյոզային առողջարան մեկնած վարձու աշխատողի համար, եթե ստացիոնարում գտնվելու պատճառով առաջացած անաշխատունակությունը վերականգնվելուց անցել է առավելագույնը մեկ ամիս:

48. Սույն կարգի 47-րդ կետով սահմանված դեպքում անաշխատունակության թերթիկ է բացվում առողջարանում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար:

49. Անաշխատունակության թերթիկը բացում է առողջարանի գլխավոր բժիշկը՝ հիմք ընդունելով էլեկտրոնային առողջապահության համակարգում հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) բուժվելու հետևանքով բացված անաշխատունակության թերթիկը, որտեղ առկա է առողջարանային լիաբուժման կամ հակատուբերկուլյոզային առողջարանում բուժվելու անհրաժեշտության մասին նշում:

50. Վարձու աշխատողին և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին պրոթեզավորման պատճառով առաջացած անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկ է բացվում հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար՝ ընդհանուր հիմունքներով:

51. Սույն կարգի 50-րդ կետում նշված՝ պրոթեզավորման պատճառով առաջացած անաշխատունակության մասին անաշխատունակության թերթիկում կատարվում է նշում, որը փոխանցվում է ծառայության տեղեկատվական համակարգ:

52. Անձի՝ անաշխատունակությունն առողջարանային բուժման անհրաժեշտության դեպքում այդ մասին անաշխատունակության թերթիկում կատարվում է նշում, որը փոխանցվում է ծառայության տեղեկատվական համակարգ:

7. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՏՎՅԱԼՆԵՐԸ) ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

53. Սույն կարգի շրջանակներում հարկային մարմնի տեղեկատվական բազայից ծառայության տեղեկատվական համակարգ են փոխանցվում տեղեկատվություն անձի՝

անաշխատունակության առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ լինելու (չլինելու), օրենքով սահմանված եկամուտների վերաբերյալ:

54. Անաշխատունակության վերջին օրվա (անաշխատունակության թերթիկը փակելու) վերաբերյալ տեղեկատվությունը ծառայության տեղեկատվական համակարգից ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, նախորդ օրվա դրությամբ առկա՝ նպաստը հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը հարկային մարմնի տեղեկատվական բազայից փոխանցվում է ծառայության տեղեկատվական բազա:

55. Սույն կարգի 54-րդ կետում նշված տեղեկատվությունը փոխանցելու ամսվանից հետո՝ 36 ամսվա ընթացքում, վարձու աշխատողի գործատուի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կամ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի կողմից հարկային մարմին գրանցման հայտ կամ հաշվարկ (այդ թվում՝ ճշտված) ներկայացնելու կամ հարկային հսկողության իրականացմամբ նպաստը հաշվարկելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության (տվյալի) փոփոխություն հայտնաբերելու դեպքում, փոփոխված տվյալը փոխանցվում է ծառայության տեղեկատվական բազա՝ համապատասխան հանգամանքն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

56. Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում նպաստը հաշվարկելու (վերահաշվարկելու) օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում գործատուին փոխանցելու համար ծառայության տեղեկատվական համակարգից հարկային մարմնի տեղեկատվական բազա փոխանցվում է տեղեկատվություն՝

1) վարձու աշխատողի անաշխատունակության ժամանակահատվածի վերաբերյալ, որի համար հաշվարկվել է նպաստը.

2) գործատուի կողմից վճարման ենթակա՝ անաշխատունակության նպաստի գումարի վերաբերյալ:

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման

Կ Ա Ջ Մ

ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՏՎՅԱԼՆԵՐԸ) ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ (ՏՎՅԱԼՆԵՐԻ)

1. Սույն հավելվածով սահմանվում է «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստը և մայրության նպաստը (այսուհետ՝ երկուսը միասին՝ նպաստ) նշանակելու, հաշվարկելու և վճարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կողմից վարվող տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ծառայության տեղեկատվական համակարգ), էլեկտրոնային առողջապահության համակարգի և հարկային մարմնի կողմից վարվող տեղեկատվական բազայի (այսուհետ՝ հարկային մարմնի տեղեկատվական բազա) միջև փոխանակվող տեղեկատվության (տվյալների) կազմը:

2. Ժամանակավոր անաշխատունակության թերթիկը (բացառությամբ հղիության և ծննդաբերության և օտարերկրյա պետության բժշկական փաստաթղթի հիման վրա անաշխատունակության թերթիկ տալու դեպքերի) բացելուց հետո էլեկտրոնային առողջապահության համակարգից ծառայության տեղեկատվական համակարգ փոխանցվում է՝

1) անձի (ում անվամբ բացվել է ժամանակավոր անաշխատունակության թերթիկը (այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

2) անաշխատունակության թերթիկի համարը.

3) նշում շարունակելի լինելու մասին և նախորդ անաշխատունակության թերթիկի համարը (եթե տվյալ անաշխատունակության թերթիկը շարունակելի է).

4) ժամանակավոր անաշխատունակության (այսուհետ՝ անաշխատունակության) առաջին օրը (օրը, ամիսը, տարին).

5) անաշխատունակության պատճառը՝

ա. հիվանդության,

բ. պրոթեզավորման,

գ. առողջարանային բուժման,

դ. ընտանիքի հիվանդ անդամի խնամքի,

ե. մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքի համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության պատճառով կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել.

6) ռեժիմը (ստացիոնար կամ ամբուլատոր):

3. Անաշխատունակության թերթիկը փակելուց կամ օրենսդրությամբ սահմանված դեպքում երկարաձգելուց կամ հղիության և ծննդաբերության պատճառով կամ օտարերկրյա պետության բժշկական փաստաթղթի հիման վրա անաշխատունակության թերթիկ տրամադրելուց հետո՝ էլեկտրոնային առողջապահության համակարգից ծառայության տեղեկատվական համակարգ փոխանցվում է՝

1) անձի (ում անվամբ բացվել է անաշխատունակության թերթիկը) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

2) անաշխատունակության թերթիկի համարը.

3) շարունակելի լինելու մասին նշում (ունենալու է հաջորդ).

4) անաշխատունակության պատճառը՝

ա. հիվանդության,

բ. պրոթեզավորման,

գ. առողջարանային բուժման,

դ. ընտանիքի հիվանդ անդամի խնամքի,

ե. մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքի համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության պատճառով կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել.

5) ռեժիմը (ստացիոնար կամ ամբուլատոր).

6) նշում ստացիոնար ռեժիմի խախտման մասին (առկայության դեպքում).

7) անաշխատունակության ժամանակահատվածի վերջին օրը, իսկ հղիության և ծննդաբերության կամ օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված փաստաթղթի հիման վրա անաշխատունակության թերթիկ տալու դեպքերում՝ անաշխատունակության ժամանակահատվածի սկիզբը և վերջը.

8) հղիության և ծննդաբերության դեպքում՝ նաև անաշխատունակության թերթիկը բացելու օրվա դրությամբ հղիության տևողությունը.

9) օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված փաստաթղթի հիման վրա անաշխատունակության թերթիկ տալու դեպքում՝ նաև օտարերկրյա պետության բժշկական փաստաթղթի հիման վրա անաշխատունակության թերթիկ տրամադրելը.

10) բանկի անվանումը, որտեղից անձը ցանկանում է ստանալ պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվող նպաստի գումարը:

4. Սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված ցանկացած տվյալի փոփոխության դեպքում փոփոխված (չեղարկված) տվյալը էլեկտրոնային առողջապահության համակարգից ծառայության տեղեկատվական համակարգ փոխանցվում է փոփոխությունը կատարելու (չեղարկելու) օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում:

5. Էլեկտրոնային առողջապահության համակարգից անաշխատունակության թերթիկ բացելու (բացառությամբ հղիության և ծննդաբերության և օտարերկրյա պետության բժշկական փաստաթղթի հիման վրա անաշխատունակության թերթիկ

տալու դեպքերի) վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո ծառայության տեղեկատվական համակարգից հարկային մարմնի տեղեկատվական բազա փոխանցվում է՝

1) անձի (ում անվամբ բացվել է անաշխատունակության թերթիկը) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

2) անաշխատունակության առաջին օրը.

3) անաշխատունակության շարունակելի լինելը (փոխանցվում է միայն անաշ-խատունակության 7-րդ օրը կամ դրանից հետո առաջին անգամ շարունակելի լինելու դեպքում).

4) անաշխատունակության պատճառը՝

ա. հիվանդության,

բ. պրոթեզավորման,

գ. առողջարանային բուժման,

դ. ընտանիքի հիվանդ անդամի խնամքի,

ե. մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքի համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվան-դության պատճառով կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել:

6. Էլեկտրոնային առողջապահության համակարգից անաշխատունակության թերթիկ փակելու, այդ թվում՝ հղիության և ծննդաբերության պատճառով կամ օտարերկրյա պետության բժշկական փաստաթղթի հիման վրա կամ ոչ աշխատան-քային օրվա ընթացքում անաշխատունակության թերթիկ տրամադրելու (երբ միաժամանակ բացվում և փակվում է) վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո ծառայության տեղեկատվական համակարգից հարկային մարմնի տեղե-կատվական բազա փոխանցվում է՝

1) անձի (ում անվամբ բացվել է անաշխատունակության թերթիկը) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

2) անաշխատունակության վերջին (փակելու) օրը.

3) հղիության և ծննդաբերության կամ օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված փաստաթղթի հիման վրա անաշխատունակության թերթիկ տալու դեպքերում՝ անաշխատունակության ժամանակահատվածի սկիզբը և վերջը.

4) 140 օրվանից հետո հղիության և ծննդաբերության դեպքում շարունակելի թերթիկի դեպքում՝ նախորդ թերթիկի վերջին (փակելու) օրը:

7. Սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերում նշված ցանկացած տվյալի փոփոխության դեպքում փոփոխված (չեղարկված) տվյալը էլեկտրոնային առողջապահության համակարգից ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ծառայության տեղեկատվական համակարգից այն փոխանցվում է հարկային մարմնի տեղեկատվական բազա:

8. Սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերում նշված տվյալները կամ դրանց փոփոխությունները ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնի տեղեկատվական բազայի միջոցով փոխանցվում են գործատուին (եթե անձը վարձու աշխատող է) կամ հասանելի են դառնում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին:

9. Նպաստը հաշվարկելու համար հարկային մարմնի տեղեկատվական բազայից ծառայության տեղեկատվական համակարգ փոխանցվում է՝

1) վարձու աշխատողի՝

ա. հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը,

բ. անձի՝ անաշխատունակության առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող հանդիսանալու (չհանդիսանալու) վերաբերյալ (այդ թվում՝ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատու, այսուհետ՝ ՀԳՊԱ ունենալու վերաբերյալ) տեղեկատվություն,

գ. անաշխատունակության առաջին օրվա դրությամբ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող գործատուի (գործատուների) հարկ վճարողի հաշվառման համարը (համարները) (ՀՎՀՀ-ն), եթե գործատուն չի հանդիսանում ՀԳՊԱ,

դ. անաշխատունակության առաջին օրվա դրությամբ եկամտային հարկի գծով պարտավորություններ կատարած (չկատարած) լինելու վերաբերյալ տեղեկատվություն, եթե գործատուն հանդիսանում է ՀԳՊԱ,

ե. գործատուի իրավահաջորդի կամ լուծարման (ֆիզիկական անձ գործատուի մահվան) վերաբերյալ, եթե անաշխատունակությունն առաջանալուց հետո՝ մինչև նպաստ հաշվարկելը գործատուն վերակազմակերպվել է կամ լուծարվել (ֆիզիկական անձ գործատուն՝ մահացել) վերաբերյալ տեղեկատվություն,

զ. գործատուի (համատեղության դեպքում՝ յուրաքանչյուր գործատուի) կողմից անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկու օրացուցային ամիսների (այսուհետ՝ հաշվարկային ժամանակահատված) ընթացքում վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամտի վերաբերյալ տեղեկատվություն, առանձին՝ ըստ գործատուների և ամիսների,

է. հաշվարկային ժամանակահատվածում (այդ ժամանակահատվածի որևէ ամսում) վարձու աշխատողի խնամքի արձակուրդում գտնվելու ամիսների և խնամքի արձակուրդն սկսվելու ամսվան նախորդող ամսվա համար գործատուի, ում մոտ վարձու աշխատողը գտնվում է խնամքի արձակուրդում, վճարած (վճարման ենթակա) եկամտի վերաբերյալ տեղեկատվություն,

ը. վարձու աշխատողի գործատուի (համատեղության դեպքում՝ բոլոր գործատուների) մոտ աշխատելու ժամանակահատվածը տասներկու ամսից պակաս լինելու դեպքում՝ հաշվարկային ժամանակահատվածում այլ գործատուների՝ մինչև վարձու աշխատողի գործատուի մոտ աշխատանքի անցնելու ամիսը (համատեղության դեպքում՝ գործատուների մոտ աշխատանքի ընդունվելու ամիսները) վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ ամիսների.

2) հաշվարկային ժամանակահատվածում (այդ ժամանակահատվածի որևէ ամսում) վարձու աշխատողի չվճարվող արձակուրդում գտնվելու ամիսների (սկիզբ

և վերջ) վերաբերյալ տեղեկատվություն, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

բ. անաշխատունակության առաջին օրվա դրությամբ հարկման ռեժիմը (հարկման ընդհանուր համակարգում հարկ վճարող, շրջանառության հարկ վճարող, բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ),

գ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ գործունեությունը դադարեցնելու օրը, որոշակի ժամկետով դադարեցնելու դեպքում՝ նաև գործունեությունը դադարեցնելու վերջին օրը,

դ. անաշխատունակության առաջին օրվա դրությամբ «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքով սահմանված հարկային արտոնություններից օգտվելը,

ե. անաշխատունակության առաջին օրվա դրությամբ շահութահարկի գծով պարտավորությունները կատարած (չկատարած) լինելու վերաբերյալ,

զ. եթե անաշխատունակության առաջին օրվա դրությամբ հանդիսանում է հարկման ընդհանուր համակարգում հարկ վճարող, ապա անաշխատունակության դեպքի տարվան նախորդող տարում հարկման ռեժիմն ըստ ամիսների, շահութահարկի հարկման բազա համարվող եկամուտը:

10. Նպաստը հաշվարկելուց (վերահաշվարկելուց) հետո ծառայության տեղեկատվական համակարգից հարկային մարմնի տեղեկատվական բազա է փոխանցվում՝

1) վարձու աշխատողի՝ հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ՀՎՀՀ-ն.

2) ժամանակահատվածը, որի համար հաշվարկվել է նպաստը.

3) ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ գործատուի կողմից վճարման ենթակա չափը և ժամանակավոր անաշխատունակության օրերի թիվը.

4) նպաստի՝ ծառայության կողմից վճարման ենթակա չափը, դրա նկատմամբ հաշվարկված եկամտային հարկի չափը:

11. Սույն հավելվածի 9-րդ կետում նշված տվյալները փոխանցելու ամսվանից հետո՝ 36 ամսվա ընթացքում դրանցից որևէ մեկի փոփոխության դեպքում փոփոխված (չեղարկված) տվյալը հարկային մարմնի տեղեկատվական բազայից փոխանցվում է ծառայության տեղեկատվական համակարգ՝ համապատասխան հանգամանքն ի հայտ գալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

12. Սույն հավելվածի 11-րդ կետի համաձայն ստացված տվյալի փոփոխության հաշվառմամբ նպաստը վերահաշվարկելուց հետո ծառայության տեղեկատվական համակարգից հարկային մարմնի տեղեկատվական բազային փոխանցվում են սույն հավելվածի 10-րդ կետով տրված տվյալների փոփոխված տվյալները՝ վերահաշվարկից հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում:

13. Սույն հավելվածի 12-րդ կետում նշված տեղեկատվությունը հարկային մարմնի տեղեկատվական բազայի միջոցով փոխանցվում է վարձու աշխատողի գործատուին կամ հասանելի է դարձնում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին:

14. Սույն հավելվածի շրջանակներում տեղեկատվությունը (տվյալները) ծառայության տեղեկատվական համակարգի, էլեկտրոնային առողջապահության համակարգի և հարկային մարմնի տեղեկատվական բազայի միջև փոխանակվում են ինքնաշխատ եղանակով՝ փոխգործելիության հիմքով:

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՎԱԾ՝ ԱՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿ ԼԻՆԵԼԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՏՎՅԱԼՆԵՐԸ) ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՏՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐԱՌԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 24-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված՝ անձի ժամանակավոր անաշխատունակ լինելը հաստատող փաստաթղթի հիման վրա անձի ժամանակավոր անաշխատունակության վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի տված թույլտվության հիման վրա էլեկտրոնային առողջապահության համակարգ ներառելուն առնչվող հարաբերությունները:

2. Օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի կամ ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը հաստատող այլ փաստաթղթի (այսուհետ՝ բժշկական փաստաթուղթ) հիման վրա անձի համար էլեկտրոնային առողջապահության համակարգում բացվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկ (այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ):

3. Անձն անձամբ կամ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի կողմից վավերացված լիազորագրով լիազորված անձի միջոցով Առողջապահության նախարարություն է ներկայացնում հյուպատոսական վավերացմամբ, իսկ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքում՝ ապոստիլի հիման վրա վավերացված բժշկական փաստաթուղթը և դրա նոտարական կամ հյուպատոսական կարգով վավերացված թարգմանությունը, բացառությամբ այն

դեպքերի, երբ այդ փաստաթղթերը լրացված են ռուսերեն, ինչպես նաև անձը հաստատող փաստաթուղթ, իսկ սույն կարգի 5-րդ կետում նշված դեպքում՝ նաև ծննդաբերության փաստը հաստատող բժշկական փաստաթուղթ և երեխայի ծննդյան (իսկ եթե երեխան մահացել է՝ մահվան) վկայականը: Սույն կետում նշված փաստաթղթերը անձը կարող է ներկայացնել նաև Արտաքին գործերի նախարարության միջոցով, եթե ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ հանդիսանում է օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնի վարձու աշխատող:

4. Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների բժշկական հաստատության բժշկական փաստաթուղթն առանց զինանշանի պատկերով կնիքի լինելու դեպքում, քաղաքացուն աջակցելու նպատակով Առողջապահության նախարարությունը բժշկական փաստաթղթերի իսկությունը և համապատասխանությունը պարզում է գրավոր հարցումով՝ հարցում կատարելու վերաբերյալ Առողջապահության նախարարությանը դիմումատուի տված՝ նոտարի վավերացրած լիազորագրի հիման վրա:

5. Հղիության և ծննդաբերության պատճառով ծագած ժամանակավոր անաշխատունակության դեպքում սույն կարգի համաձայն անաշխատունակության թերթիկ տրամադրվում է, եթե Առողջապահության նախարարություն դիմելու օրվա դրությամբ կինը ծննդաբերել է օտարերկրյա պետությունում: Այս դեպքում դիմումին կից ներկայացվում է երեխայի ծննդյան (իսկ եթե երեխան մահացել է՝ մահվան) վկայականը, առկայության դեպքում՝ նաև հյուպատոսական վավերացմամբ, իսկ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքում՝ ապոստիլի հիման վրա վավերացված և դրա նոտարական կամ հյուպատոսական կարգով հաստատված թարգմանությամբ (բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փաստաթղթերը լրացված են ռուսերեն) ծննդաբերության մասին բժշկական փաստաթուղթը՝ ծննդալուծման պահին հղիության գեստացիոն ժամկետի, մեռելածնության կամ ծնված երեխայի (երեխաների), հղիության և ծննդաբերության ընթացքում բարդությունների, վիրահատական միջամտությունների վերաբերյալ: Օտարերկրյա կազմակերպությունների (հաստատությունների) տված ծննդյան (մահվան) վկայականը ներկայացվում է նոտարական կարգով

վավերացված հայերեն թարգմանությամբ (բացառությամբ այն դեպքի, երբ այդ փաստաթուղթը լրացված է ռուսերեն):

6. Սույն կարգի 3-րդ և 5-րդ կետերում նշված բժշկական փաստաթղթերը, եթե օտարերկրյա պետությունում ենթակա չեն վավերացման ապոստիլով, ապա ներկայացվում է տվյալ պետության իրավասու մարմնի կամ տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնի հավաստող տեղեկանքն առ այն, որ տվյալ բժշկական փաստաթուղթն այդ պետությունում ապոստիլի հիման վրա չի վավերացվում: Սույն կետում նշված դեպքում հավաստող տեղեկանքը և բժշկական փաստաթղթերը ներկայացվում են նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությամբ:

7. Անձի կողմից փաստաթղթերը ներկայացվելու, սույն կարգի 4-րդ կետում նշված դեպքում՝ Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրի բժշկական հաստատությունից բժշկական փաստաթղթերի իսկությունը և համապատասխանությունը հավաստող փաստաթուղթն ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում Առողջապահության նախարարությունը անձին տալիս է էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկ բացելու մասին գրավոր թույլտվություն կամ մերժում է (նշելով մերժման հիմքերը) անաշխատունակության թերթիկ բացելը: Սույն կետում նշված մերժումը (մերժման հիմքերի նշմամբ) կամ գրավոր թույլտվությունը անձին ուղարկվում է դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով կամ տրամադրվում է առձեռն (թույլտվությունն ստանալու եղանակը անձը նշում է իր դիմումում): Եթե թույլտվություն տրամադրելը մերժվում է սույն կարգի 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու հիմքով, ապա Առողջապահության նախարարությունը տեղեկացնում է նաև անհրաժեշտ փաստաթղթերն աշխատունակության վերականգնման, հղիության և ծննդաբերության արձակուրդի (ժամանակահատվածի) ավարտման օրվանից վեց ամսվա ընթացքում կրկին ներկայացնելու անհրաժեշտության մասին: Եթե անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են նախորդ փաստաթղթերը ներկայացնելու ամսվանից հետո մեկ ամսվա ընթացքում, ապա դիմելու օր է համարվում նախորդ փաստաթղթերը ներկայացնելու օրը:

8. Ժամանակավոր անաշխատունակության սկիզբը և վերջը որոշում է համապատասխան բժշկական հաստատությունը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետները, Առողջապահության նախարարության թույլտվությունը և սույն կարգի 5-րդ կետում նշված ծննդաբերության մասին բժշկական փաստաթուղթը: Այն դեպքում, երբ չի ներկայացվել սույն կարգի 5-րդ կետում նշված ծննդաբերության մասին բժշկական փաստաթուղթը, ապա անաշխատունակության թերթիկը բացվում է միայն հետծննդյան ժամանակահատվածի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված օրերի համար՝ սկսած երեխայի ծննդյան օրվանից: Եթե կինը տվյալ հղիության ընթացքում որպես հղի հաշվառվել է Հայաստանի Հանրապետության բժշկական հաստատությունում, և իրականացվել է առնվազն մեկ ուլտրաձայնային հետազոտություն, համապատասխան բժշկական հաստատությունը ժամանակավոր անաշխատունակության սկիզբը և վերջը որոշում է՝ հիմք ընդունելով բժշկական հաստատությունում առկա հղիության ժամկետի վերաբերյալ տվյալները:

9. Առողջապահության նախարարությունը մերժում է անձին անաշխատունակության թերթիկ տրամադրելու մասին թույլտվություն տրամադրելը, եթե՝

1) թույլտվություն տալու համար անձն անձամբ չի դիմել (բացառությամբ այն դեպքի, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ վերջինիս գործատուն օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինն է կամ ներկայացվել է սույն կարգի 3-րդ կետում նշված լիազորագիրը).

2) պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են աշխատունակության վերականգնման, հղիության և ծննդաբերության արձակուրդի (ժամանակահատվածի) ավարտման օրվանից վեց ամիս հետո.

3) չեն ներկայացվել (պակաս են ներկայացվել) սույն կարգի 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը, այդ թվում՝ սույն կետի 2-րդ ենթակետում նշված ժամկետում չի ստացվել սույն կարգի 4-րդ կետում նշված հարցման պատասխանը:

10. Անձին առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունը, Առողջապահության նախարարության գրավոր թույլտվության հիման վրա, էլեկտրոնային առողջապահության համակարգում անձի համար բացում է անաշխատունակության թերթիկ: Առողջապահության նախարարության գրավոր թույլտվությունն իրեն առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությանը անձը, բացառությամբ սույն կարգի 11-րդ կետում նշված դեպքի, ներկայացնում է անձամբ՝ այդ թույլտվությունն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

11. Առողջապահության նախարարության գրավոր թույլտվությունն իրեն առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությանը անձը կարող է ներկայացնել լիազորված անձի միջոցով, եթե ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ գործատուն օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմին է: Սույն կետում նշված դեպքում ներկայացվում է նաև իր անունից հանդես գալու վերաբերյալ նոտարական կարգով վավերացրած լիազորագիրը:

12. Սույն կարգի 10-րդ և 11-րդ կետերում նշված դեպքերում, եթե անձի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողությունը վերականգնվել է, ապա էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկը բացվում և միաժամանակ փակվում է անաշխատունակության թերթիկը լրացնելու համար սույն որոշմամբ սահմանված կարգով և նշում է կատարվում այն մասին, որ թերթիկը բացված է Առողջապահության նախարարության թույլտվության հիման վրա, միաժամանակ էլեկտրոնային առողջապահության համակարգ ներբեռնելով Առողջապահության նախարարության գրավոր թույլտվությունը և դրա տրամադրման համար հիմք հանդիսացող՝ Առողջապահության նախարարություն ներկայացրած փաստաթղթերի լուսապատճենները:

13. Սույն կարգի 10-րդ կետում նշված դեպքում, եթե անձի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողությունը դեռևս չի վերականգնվել, ապա էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկը բացվում է և անաշխատունակության թերթիկի երկարաձգումն իրականացվում է

օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Սույն կետը կիրառելի է սույն կարգի 11-րդ կետում նշված դեպքում, եթե ուղեգրելու օրվա դրությամբ անձը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

14. Սույն կարգի 13-րդ կետում նշված դեպքում, եթե առկա է անաշխատունակության թերթիկի երկարաձգման վերաբերյալ ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողովի որոշումը (վարչական ակտը), և հիվանդը շարունակում է մնալ ժամանակավորապես անաշխատունակ, ապա անաշխատունակության թերթիկում նշված ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը ևս 3 ամիս ժամկետով:

15. Եթե ժամանակավոր անաշխատունակությունն սկսելու օրվանից հետո անցել է ավելի քան 80 օր, ապա Առողջապահության նախարարության գրավոր թույլտվության հիման վրա, անձի համար բացվում է անաշխատունակության թերթիկ՝ առավելագույնը 3 ամիս ժամկետով (բացառությամբ հղիության և ծննդաբերության դեպքի):

16. Բժշկական հաստատությունը մերժում է անձին անաշխատունակության թերթիկ տրամադրելը, եթե՝

1) դիմելու օրվա դրությամբ աշխատունակության վերականգնման, հղիության և ծննդաբերության արձակուրդի (ժամանակահատվածի) ավարտման օրվան հաջորդող ամսվանից սկսած անցել է ավելի, քան վեց ամիս կամ

2) Առողջապահության նախարարության գրավոր թույլտվությունը տալուց հետո անցել է ավելի, քան մեկ ամիս կամ

3) անձն անձամբ չի դիմել անաշխատունակության թերթիկի բացման համար (բացառությամբ սույն կարգի 11-րդ կետում նշված դեպքի) կամ

4) սույն կարգի 11-րդ կետում նշված դեպքում չի ներկայացվել անաշխատունակության թերթիկն այլ անձի տալու վերաբերյալ նոտարական կարգով վավերացրած լիազորագիրը կամ

5) ժամանակավոր անաշխատունակության տվյալ դեպքի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ անաշխատունակության թերթիկ չի բացվում:

17. Անաշխատունակության թերթիկ բացելը մերժելու դեպքում բժշկական հաստատությունը անձի այցից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր

տեղեկացնում է անձին և Առողջապահության նախարարությանը՝ նշելով մերժման հիմքը:

18. Անձին՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկ բացելու մասին գրավոր թույլտվության և դրա տրամադրման համար հիմք հանդիսացող՝ Առողջապահության նախարարություն ներկայացրած փաստաթղթերի լուսապատճեններն Առողջապահության նախարարությունն ուղարկում է անձին առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատություն:

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ հոդվածի 8-րդ, 17-րդ մասերի համաձայն՝ անձին (այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկում գտնվող ազատազրկված դատապարտյալին) ժամանակավոր անաշխատունակության նպաստի (այսուհետ՝ անաշխատունակության նպաստ) և մայրության նպաստի (այսուհետ՝ երկուսը միասին՝ նպաստ) հաշվարկմանը, նշանակմանը, վճարմանն առնչվող հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են օրենքով սահմանված իմաստով:

3. Օրենքով սահմանված անաշխատունակության նպաստը և մայրության նպաստը հաշվարկում, նշանակում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ հիմք ընդունելով տեղեկատվությունը (տվյալները)՝

1) էլեկտրոնային առողջապահության համակարգում առկա՝ վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության (այսուհետ՝ անաշխատունակություն) մեջ գտնվելու վերաբերյալ.

2) «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայում

(այսուհետ՝ հարկային մարմնի տեղեկատվական բազա) առկա՝ անձի՝ վարձու աշխատող կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ հանդիսանալու, հաշվարկային ժամանակահատվածում վճարված (վճարվելիք) եկամտի, այդ թվում՝ մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ն առաջացած անաշխատունակության համար վճարված նպաստի վերաբերյալ.

3) իր կողմից վարվող տեղեկատվական համակարգում առկա՝ անձին վճարված նպաստի վերաբերյալ.

4) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները, անձի՝

ա. անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում),

բ. անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը,

գ. ծննդյան օրը, ամիսը, տարին,

դ. քաղաքացիությունը,

ե. փախստականի կարգավիճակ ունենալը (առկայության դեպքում),

զ. հաշվառման հասցեն և այդ հասցեում հաշվառվելու օրը, ամիսը, տարին,

է. մահվան օրը, ամիսը, տարին,

ը. սեռը.

5) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալները՝ անձի մահվան օրը, ամիսը, տարին.

6) քաղաքացու դիմումը, եթե՝

ա. նպաստը նշանակվելու է վարձու աշխատողին, ում վերաբերող տեղեկատվությունն անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ համարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն կամ

բ. նպաստը նշանակվելու է դատական ակտի հիման վրա կամ

գ. հաշվարկում, նշանակում է վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մահվան պատճառով չնշանակված կամ չվճարված նպաստ:

4. Անձը, բացառությամբ սույն կարգի 3-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված դեպքերի, անաշխատունակության կամ մայրության նպաստի նշանակման համար դիմում և փաստաթղթեր չի ներկայացնում:

5. Օրենքով անաշխատունակության կամ մայրության նպաստի իրավունք ունենալու դեպքում նպաստը նշանակվում է էլեկտրոնային առողջապահության համակարգում բացված անաշխատունակության թերթիկի հիման վրա:

6. Իր համակարգի աշխատողի (ում վերաբերյալ տվյալներն անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ համարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն) անաշխատունակության մասին Պաշտպանության նախարարությունից, Ներքին գործերի նախարարությունից, Ազգային անվտանգության ծառայությունից, Արտաքին հետախուզության ծառայությունից, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից, Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից, Հակակոռուպցիոն կոմիտեից հարցում ստանալու դեպքում, եթե տվյալ անձի տվյալներն առկա են էլեկտրոնային առողջապահության համակարգից ստացված տվյալներում, ապա անձի՝ անաշխատունակության վերաբերյալ տեղեկատվությունը (անաշխատունակության թերթիկ բացելու և փակելու ամսաթիվը (օրը, ամիսը, տարին) և անաշխատունակության պատճառը) ծառայությունը փոխանցում է հարցում կատարած մարմին:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված տվյալները փոխանակվում են ինքնաշխատ եղանակով՝ տվյալների շտեմարանների փոխգործելիության միջոցով:

8. Սույն կարգի 3-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված դեպքերում նպաստը հաշվարկվում, նշանակվում և վճարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման N 6 հավելվածով սահմանված կարգով:

9. Վարձու աշխատողին տրվող նպաստը ծառայությունը հաշվարկում, նշանակում և վճարում է, եթե հարկային մարմնից ստացված տեղեկատվության համաձայն՝ օրենքով սահմանված կարգով ու չափով վարձու աշխատողի համար վճարվել է (հաշվարկվել է) եկամտային հարկ (ունի նպաստի իրավունք):

10. Համատեղությամբ աշխատող վարձու աշխատողին նպաստ հաշվարկելիս, նշանակելիս և վճարելիս սույն կարգի 9-րդ կետը կիրառվում է առանձին յուրաքանչյուր գործատուի համար:

11. Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում նշված անձանց գործատուի՝ հաշվարկային ժամանակահատվածում վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտը օրենքի 22-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված կարգով հաշվի է առնվում որպես այլ գործատուի վճարած եկամուտ, եթե վարձու աշխատողը անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ չի հանդիսանում օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում նշված անձ:

12. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին նպաստ նշանակվում է, եթե հարկային մարմնից ստացված տեղեկատվության համաձայն՝

1) օրենքով սահմանված կարգով ու չափով նա վճարել է շահութահարկ (ունի նպաստի իրավունք).

2) մայրության նպաստի դեպքում նաև՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում նա անորոշ կամ որոշակի ժամկետով դադարեցրել է գործունեությունը, բացառությամբ, երբ անաշխատունակությունն առաջացել է օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված ժամանակահատվածում:

13. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի անաշխատունակությունն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված ժամանակահատվածներում առաջանալու հիմքով անաշխատունակության նպաստ չի նշանակվում, իսկ մայրության նպաստ նշանակվում է անկախ շահութահարկ վճարած լինելու հանգամանքից՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի օրերի համար:

14. Անաշխատունակության առաջին օրվա դրությամբ համատեղությամբ աշխատող վարձու աշխատողին կամ միաժամանակ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող վարձու աշխատողին նպաստ հաշվարկելիս, նշանակելիս և վճարելիս, որպես վարձու աշխատող միջին ամսական եկամտի հաշվարկում հաշվի է առնվում այն գործատուի վճարած եկամուտը, որի

համար ապահովված են սույն կարգի 9-րդ կետի պայմանները, իսկ նրա՝ որպես ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ ստացած եկամուտը հաշվի է առնվում, եթե նրա անաշխատունակությունը չի առաջացել օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված ժամանակահատվածում և բավարարված են սույն կարգի 12-րդ կետի պայմանները:

15. Սույն կարգի 14-րդ կետում նշված դեպքում մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական եկամուտն օրենքով սահմանված կարգով հաշվարկելիս հաշվարկային ժամանակահատվածում յուրաքանչյուր գործատուի վճարած եկամուտին որպես ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ ստացած եկամուտը գումարվում է հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվելու (անորոշ կամ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու) ու հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու օրերի համամասնությամբ:

16. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի՝ անաշխատունակությունն առաջանալու տարվան նախորդող տարվա ընթացքում շրջանառության հարկի համակարգում իրականացրած յուրաքանչյուր ամսվա համար որպես շահութահարկի հարկման բազա համարվող եկամուտ ընդունվում է անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսը:

17. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի նպաստը հաշվարկում է նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից, եթե՝

1) միջին ամսական եկամուտը պակաս է անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից կամ

2) անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ իրականացրել է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի համակարգում հարկվող գործունեության տեսակներ՝ անկախ անաշ-

խատունակությունն առաջանալու տարվան նախորդող տարվա՝ օրենքով սահմանված շահութահարկի հարկման բազա համարվող եկամուտ ունենալու հանգամանքից.

3) անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձը չունի ժամանակավոր անաշխատունակության առաջացման տարվան նախորդող տարվա՝ օրենքով սահմանված շահութահարկի հարկման բազա համարվող եկամուտ:

18. Եթե հաշվարկային ժամանակահատվածում կան ամիսներ, որոնց համար վճարվել է նպաստ, ապա օրենքով սահմանված կարգով միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս այդ օրերի համար հաշվարկված եկամտի չափը որոշելու համար անձին վճարված անաշխատունակության կամ մայրության նպաստի ընդհանուր գումարը բաժանվում է անաշխատունակության (հղիության և ծննդաբերության արձակուրդի) ժամանակահատվածի օրացուցային օրերի թվի վրա և բազմապատկվում է հաշվարկային ժամանակահատվածի ու անաշխատունակության (հղիության և ծննդաբերության արձակուրդի) ժամանակահատվածի համընկնող օրացուցային օրերի թվով:

19. Հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում գործատուի փոփոխության (բացառությամբ վերակազմակերպման) դեպքում մայրության նպաստը վարձու աշխատողին վճարվում է հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնված օրերի համար:

20. Մայրության նպաստի չափը չի կարող պակաս լինել անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից 140 օրվա (վաղաժամ ծննդաբերության դեպքում՝ 70 օրվա) համար հաշվարկված մայրության նպաստի չափից:

21. Անձի անաշխատունակության (այդ թվում՝ հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած) առաջին օրվանից մինչև վերջին օրը՝ ներառյալ, ժամանակահատվածի համար վարձու աշխատողին վճարվում է նպաստ, իսկ գործատուն այդ ժամանակահատվածի համար աշխատավարձ չի հաշվարկում և չի վճարում, բացառությամբ սույն կարգի 22-րդ կետում նշված դեպքի:

22. Եթե անձի անաշխատունակության (այդ թվում՝ հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած) ժամանակահատվածը որոշվել է օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված համապատասխան փաստաթղթերի հիման վրա, և անաշխատունակության թերթիկը չի փակվել (շարունակելի է), ապա գործատուն աշխատավարձ չի վճարում վարձու աշխատողի անաշխատունակության մասին տեղեկատվություն ստանալու օրվան և դրան հաջորդող՝ անաշխատունակության օրերի համար:

23. Գործատուն հղիության և ծննդաբերության արձակուրդը տրամադրում է հարկային մարմնից (հարկային մարմնի տեղեկատվական բազայից) ստացված՝ անաշխատունակության տեղեկատվության հիման վրա՝ անաշխատունակության ամբողջ ժամանակահատվածի համար, եթե անձը չի գտնվում մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում: Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում վարձու աշխատողին հղիության և ծննդաբերության արձակուրդը տրվում է ընդհանուր հիմունքներով՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդի ժամանակահատվածների չհամընկնող օրերի համար:

24. Նպաստի գումարից եկամտային հարկը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված չափով և կարգով:

25. Ծառայությունը մերժում է սույն կարգի 3-րդ կետի 1-5-րդ ենթակետերում նշված տեղեկատվության (տվյալների) հիման վրա անաշխատունակության նպաստ նշանակելը, եթե՝

1) անաշխատունակության առաջին օրվա դրությամբ անձը չի հանդիսանում վարձու աշխատող կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ կամ

2) առկա չէ տեղեկատվություն ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կողմից շահութահարկ վճարած լինելու վերաբերյալ կամ

3) առկա չէ տեղեկատվություն վարձու աշխատողի համար (կողմից) օրենքով սահմանված կարգով ու չափով եկամտային հարկ վճարած (վճարման ենթակա) լինելու վերաբերյալ կամ

4) նրա տվյալները չեն նույնականացվում Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում կամ

5) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի տվյալներով օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը անաշխատունակության առաջին օրվա դրությամբ հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով կամ

6) ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի՝ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) բուժման ժամանակահատվածը մեկ օրացուցային տարվա ընթացքում 60 օրացուցային օրից ավելի է (60 օրացուցային օրը գերազանցող օրերի համար) կամ

7) ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի անաշխատունակությունն առաջացել է օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված ժամանակահատվածում կամ

8) հարկային մարմնից ստացված տեղեկատվության համաձայն՝ վարձու աշխատողը անաշխատունակության ժամանակահատվածում գտնվել է չվճարվող արձակուրդում կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում:

26. Ծառայությունը մերժում է սույն կարգի 3-րդ կետի 1-5-րդ ենթակետերում նշված տեղեկատվության (տվյալների) հիման վրա մայրության նպաստ նշանակելը, եթե՝

1) առկա են սույն կարգի 25-րդ կետի 1-ին, 3-5-րդ ենթակետերում նշված հանգամանքները կամ

2) առկա է տեղեկատվություն անաշխատունակության առաջին օրվա դրությամբ վարձու աշխատողի հղիության և ծննդաբերության արձակուրդում չգտնվելու վերաբերյալ կամ

3) առկա չէ տեղեկատվություն ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կողմից շահութահարկ վճարված լինելու վերաբերյալ, բացառությամբ օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված դեպքերի կամ

4) առկա չէ տեղեկատվություն հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով

ապահովված անձի գործունեությունը անորոշ կամ որոշակի ժամկետով դադարեցնելու վերաբերյալ, բացառությամբ օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված դեպքերի:

27. Նպաստ նշանակելու (վճարելու) կամ նպաստ նշանակելը մերժելու մասին ծառայությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կարգով ծանուցում է այն անձին, ում վճարվել է նպաստը (ում վճարելու համար նպաստի գումարը փոխանցվել է բանկ) կամ ում մերժել է նպաստ նշանակելը՝ նշելով մերժման հիմքերը:

28. Սույն կարգի 27-րդ կետում նշված ծանուցումներն ուղարկվում են ՀՀ սոցիալական պաշտպանության ծառայությունների միասնական հարթակի (https://www.e-social.am/) միջոցով, եթե նպաստ ստացողը գրանցված է այդ հարթակում կամ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների հարթակի (https://azdarar.am/) միջոցով՝ անհատական ծանուցմամբ, եթե նպաստ ստացողը գրանցված չէ https://www.e-social.am/ հարթակում:

29. Մայրության նպաստի գումարը և անաշխատունակության նպաստի՝ պետական բյուջեի միջոցներից վճարման ենթակա գումարը վճարում է ծառայությունը՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում անաշխատունակության թերթիկում նշված բանկին փոխանցելու միջոցով: Իր միջոցներից վճարման ենթակա՝ վարձու աշխատողի անաշխատունակության նպաստի գումարը գործատուն վճարում է՝ հիմք ընդունելով ծառայության կատարած հաշվարկը, որն իրեն փոխանցվում է հարկային մարմնի տեղեկատվական բազայից:

30. Պետական բյուջեի միջոցներից վճարման ենթակա նպաստը վճարվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածով սահմանված միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագիր կնքած բանկում (այսուհետ՝ բանկ) անձի անվամբ բացված՝ միանվագ դրամական վճարների հաշիվ չհանդիսացող այլ դրամային հաշվին (բացառությամբ ավանդային և վարկային հաշիվների) փոխանցելու միջոցով.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված այլ դրամային հաշվի բացակայության դեպքում՝ անձի անվամբ միանվագ դրամական վճարների հաշվին (անձի անվամբ բացում է բանկը) փոխանցելու միջոցով:

31. Նպաստի գումարը անձի անվամբ բացված միանվագ դրամական վճարների հաշվին փոխանցելու միջոցով վճարելու դեպքում այդ հաշիվը բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը (միանվագ դրամական վճարների հաշվին առկա միջոցները դուրս գրելու կարգադրությունը) բանկին չներկայացվելու դեպքում միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրված նպաստի գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է վերադարձ-վում ծառայության և բանկի միջև կնքված միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում: Սույն կետի համաձայն՝ նպաստի գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձ-վելու դեպքում, այդ գումարը անձին այլևս չի վճարվում:

32. Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկում գտնվող ազատազրկված դատապարտյալի համար հաշվարկվում և վճարվում են միայն հիվանդության, մայրության նպաստներ՝ ընդհանուր հիմունքներով:

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՄ ԱՆՁԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության կամ դատական ակտի հիման վրա կամ անձի մահվան դեպքում «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 18-րդ մասի, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 3-րդ մասի, 27-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի (այսուհետ՝ անաշխատունակության նպաստ) և մայրության նպաստի (այսուհետ՝ երկուսը միասին՝ նպաստ) հաշվարկմանը (վերահաշվարկմանը), նշանակմանը, վճարմանն առնչվող հարաբերությունները, իսկ օգտագործվող հասկացությունները կիրառվում են օրենքով սահմանված իմաստով:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության կամ դատական ակտի հիման վրա կամ անձի մահվան պատճառով նպաստ չվճարելու դեպքում նպաստը հաշվարկում (վերահաշվարկում), նշանակում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ քաղաքացու (անձի) դիմումի հիման վրա, բացառությամբ սույն կարգի 15-րդ կետով նախատեսված դեպքի:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված դիմումը կարող է ներկայացվել առցանց կամ ծառայության ցանկացած տարածքային կենտրոն, սույն կարգով փաստաթուղթ ներկայացնելու պահանջ նախատեսված լինելու դեպքում՝ ծառայության ցանկացած տարածքային կենտրոն:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության հիման վրա վարձու աշխատողը դիմում է նպաստ նշանակելու (վերահաշվարկելու) համար, եթե ժամանակավոր անաշխատունակությունն (այսուհետ՝ անաշխատունակություն) առաջանալու օրվա դրությամբ կամ անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկու հերթական օրացուցային ամիսների (այսուհետ՝ հաշվարկային ժամանակահատված) ընթացքում իրեն վերաբերող տեղեկատվությունը համարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն:

5. Սույն կարգի 2-րդ կետում նշված դիմումն առցանց եղանակով ներկայացնելու համար անձը մուտք է գործում ՀՀ սոցիալական պաշտպանության ծառայությունների միասնական հարթակ (https://www.e-social.am/)՝ համապատասխան դաշտերում լրացնելով՝

1) նպաստի իրավունք ունեցող անձի, իսկ մահվան պատճառով չվճարված նպաստը նշանակելու (վճարելու) դիմումի դեպքում՝ այն անձի անունը, ազգանունը, ում պետք է նշանակվի (վճարվի) մահվան պատճառով չվճարված նպաստի գումար (այսուհետ՝ շահառու).

2) շահառուի հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

3) բանկի անվանումը, որտեղից շահառուն ցանկանում է ստանալ նպաստը.

4) շահառուի տեղական բջջային հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.

5) ըստ անհրաժեշտության՝ նշում շահառուի՝ Պաշտպանության նախարարության, Ներքին գործերի նախարարության, Ազգային անվտանգության ծառայու-

թյան, Արտաքին հետախուզության ծառայության, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող աշխատող լինելու մասին՝ առանձին՝ անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ և հաշվարկային ժամանակահատվածում:

6. Առցանց եղանակով ներկայացված դիմումը հաստատվում է շահառուի տեղական բջջային հեռախոսահամարի կամ էլեկտրոնային ստորագրությունը կարդացող սարքի կիրառմամբ՝ «Ես եմ» նույնականացման հարթակի միջոցով, իսկ առձեռն դիմումը՝ դիմումատուի ստորագրությամբ: Դիմումում կատարվում է իր տվյալները մշակելու, օգտագործելու և փոխանցելու վերաբերյալ շահառուի կողմից համաձայնություն տալու նշում:

7. Անձի մահվան պատճառով չվճարված նպաստը վճարելու (նշանակելու) համար դիմումը ներկայացվում է ծառայության ցանկացած տարածքային կենտրոն: Այս դեպքում սույն կարգի 5-րդ կետում նշված տվյալներից բացի, լրացվում են նաև մահացած վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի՝ սույն կարգի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տվյալները, իսկ դիմումին կցվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մահվան վկայականը (եթե քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված՝ մահվան ակտերի գրանցման վերաբերյալ տվյալներով անձի մահվան պետական գրանցումն առկա չէ) կամ մահվան փաստը հավաստող՝ օտարերկրյա պետության տված փաստաթուղթը՝ վավերացված ապոստիլով.

2) վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մահվան օրվա դրությամբ բնակության միևնույն վայրում նրա հետ հաշվառված չլինելու դեպքում՝ ամուսինը ներկայացնում է ամուսնության վկայականը, երեխան կամ ծնողը՝ ծննդյան վկայականը կամ սերման փաստը հաստատող այլ փաստաթուղթ.

3) ըստ անհրաժեշտության՝ ժառանգության իրավունքի վկայագիրը կամ ժառանգություն ընդունելու մասին դատարանի վճիռը:

8. Դատական ակտի հիման վրա նպաստը հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու, վճարելու համար դիմումը ներկայացվում է ծառայության ցանկացած տարածքային կենտրոն՝ կցելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

9. Սույն կարգի 2-րդ կետում նշված դիմումը ծառայության տարածքային կենտրոնում ներկայացվելու դեպքում ծառայության տարածքային կենտրոնի աշխատակիցը սույն կարգի համար իրեն տրված օգտանվան և գաղտնաբառի կիրառմամբ դիմողի՝ սույն կարգի 5-րդ կետում նշված տվյալները, ըստ անհրաժեշտության, նաև համապատասխան մարմինների աշխատող լինելու մասին տվյալը, մուտքագրում է ծառայության կողմից վարվող տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ համակարգ), իսկ ներկայացված փաստաթղթերի, իր տվյալները մշակելու, օգտագործելու և փոխանցելու վերաբերյալ շահառուի գրավոր համաձայնության ստորագրված տարբերակի լուսապատճենները ներբեռնում է համակարգ՝ կցելով մուտքագրված դիմումին: Եթե դիմումը ներկայացնում է շահառու չհանդիսացող այլ անձ, ապա այդ մասին դիմումում կատարվում է նշում և համակարգ են մուտքագրվում նաև դիմում ներկայացնող անձի՝ սույն կարգի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տվյալները:

10. Որևէ եղանակով շահառուի տվյալները մուտքագրելիս համակարգն ինքնաշխատ եղանակով տվյալների շտեմարանների փոխգործելիության միջոցով իրականացնում է շահառուի տվյալների ստուգում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տեղեկատվական բազայի և Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ:

11. Եթե մուտքագրված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տեղեկատվական բազայի, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի տվյալներում՝

1) առկա են անհամապատասխանություններ (սխալներ), ապա ներկայացված տվյալների հիման վրա դիմում չի ձևավորվում, և դրա մասին համակարգն անմիջապես ծանուցում է.

2) առկա չեն անհամապատասխանություններ (սխալներ)՝ շահառուն նույնականացվում է, ապա ներկայացված տվյալների հիման վրա ձևավորվում է դիմում:

12. Դիմում ձևավորելու դեպքում համակարգն ինքնաշխատ եղանակով ճշտում է շահառուի անվամբ էլեկտրոնային առողջապահության համակարգից ժամանակավոր անաշխատունակության թերթիկ (այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ) ստացած լինելու հանգամանքը:

13. Եթե շահառուի անվամբ բացված է անաշխատունակության թերթիկ և դիմումում առկա է համապատասխան մարմինների աշխատող լինելու մասին նշում, ապա շահառուի տվյալները, անաշխատունակության թերթիկ բացելու և փակելու ամսաթիվը (օրը, ամիսը, տարին) և անաշխատունակության պատճառը համակարգով ինքնաշխատ եղանակով ծառայությունն ուղարկում է դիմումում նշված համապատասխան մարմին (մարմիններ):

14. Համապատասխան մարմինը, բացառությամբ Արտաքին հետախուզության ծառայության, անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող ամսվա եկամուտը հաշվարկելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ինքնաշխատ եղանակով ծառայությանը տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում նշված անձ հանդիսանալու կամ չհանդիսանալու վերաբերյալ.

2) անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում նշված անձ չհանդիսանալու դեպքում՝

ա. անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ իր հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու կամ չգտնվելու վերաբերյալ,

բ. հաշվարկային ժամանակահատվածի այն ամիսները, որոնց ընթացքում վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվությունը համարվել է Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն,

գ. հաշվարկային ժամանակահատվածի այն ամիսների համար վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտը (ըստ ամիսների), որոնց ընթացքում վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվությունը համարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն,

դ. խնամքի արձակուրդի ժամանակահատվածի սկիզբը և ավարտը, ինչպես նաև խնամքի արձակուրդն սկսվելու ամսվան նախորդող ամսվա համար վարձու աշխատողին վճարած (վճարման ենթակա) եկամուտների չափը, եթե հաշվարկային ժամանակահատվածում կան ամիսներ, երբ վարձու աշխատողը գտնվել է մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում,

ե. հաշվարկային ժամանակահատվածի այն ամիսները, որոնց ընթացքում գտնվել է չվճարվող կամ ամենամյա արձակուրդում (արձակուրդի սկիզբը և վերջը),

զ. որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի դեպքում՝ պայմանագրի սկիզբը և վերջը:

15. Այն դեպքում, երբ Ազգային անվտանգության ծառայության համակարգում կամ Արտաքին հետախուզության ծառայությունում աշխատողի տվյալները ծառայության գործառութային առանձնահատկություններով պայմանավորված սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն համարվելու պատճառով հնարավոր չէ փոխանցել ծառայությանը, տվյալ աշխատողին ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է Ազգային անվտանգության ծառայությունը կամ Արտաքին հետախուզության ծառայությունը՝ օրենքով սահմանված կարգով:

16. Եթե անաշխատունակությունն առաջացել է հղիության և ծննդաբերության պատճառով, առկա է սույն կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետով ստացված տեղեկատվությունը և անձին, որպես չաշխատող անձ՝

1) վճարվել է մայրության նպաստ, ապա մայրության նպաստը վճարվում է օրենքով սահմանված կարգով հաշվարկված մայրության նպաստի՝ հարկումից

հետո վճարման ենթակա գումարի և, որպես չաշխատող անձ, վճարված մայրության նպաստի գումարների տարբերության չափով.

2) չի վճարվել մայրության նպաստ, ապա մայրության նպաստը հաշվարկվում և վճարվում է օրենքով սահմանված կարգով:

17. Դիմումի, դրան կից ներկայացված փաստաթղթերի և, ըստ անհրաժեշտության, կատարված հարցումներով ստացված տեղեկատվության հիման վրա օրենքին համապատասխան ծառայության մասնագետը որոշում է նպաստի իրավունքը: Եթե անձը ձեռք է բերում նպաստի իրավունք, այդ մասին համակարգում կատարում է նշում: Այս դեպքում նպաստը հաշվարկվում (վերահաշվարկվում), նշանակվում և վճարվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման N 5 հավելվածով անձի համար սահմանված կարգով:

18. Ծառայությունը մերժում է նպաստ նշանակելը, եթե՝

1) անձը չունի նպաստի իրավունք.

2) շահառուի անվամբ էլեկտրոնային առողջապահության համակարգից չեն ստացվել անձի տվյալները.

3) չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթեր.

4) անձի մահվան պատճառով չվճարված նպաստը վճարելու (նշանակելու) դիմումի դեպքում՝

ա. մահացող անձը չունի օրենքով սահմանված նպաստի իրավունք կամ

բ. դիմողը չի հանդիսանում մահացողի ընտանիքի անդամը (ամուսին, ծնող, զավակ, 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխա) կամ

գ. դիմողը Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով աշխատողի մահվան օրվա դրությամբ նրա հետ նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված չէ կամ

դ. դիմումը ներկայացվել է օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վեցամսյա ժամկետը լրանալուց հետո և չի ներկայացվել ժառանգության վկայագիր:

19. Դիմումի հիման վրա անաշխատունակության նպաստ հաշվարկելու (վերահաշվարկելու) դեպքում ծառայությունը համակարգի միջոցով ինքնաշխատ

եղանակով համապատասխան մարմնին (որից ստացված տեղեկատվության հիման վրա հաշվարկվել է նպաստը), որպես վարձու աշխատողի գործատու, տեղեկացնում է հաշվարկված նպաստի չափի, այդ թվում՝ գործատուի միջոցներից վճարման ենթակա նպաստի գումարի չափի մասին:

20. Դիմումի հիման վրա մայրության նպաստ հաշվարկելու (վերահաշվարկելու) դեպքում ծառայությունը համակարգի միջոցով ինքնաշխատ եղանակով համապատասխան մարմնին (որից ստացված տեղեկատվության հիման վրա հաշվարկվել է նպաստը), որպես վարձու աշխատողի գործատու, տեղեկացնում է հաշվարկված մայրության նպաստի չափը:

21. Սույն կարգի համաձայն ներկայացված դիմումի հիման վրա նպաստ նշանակվելու (վերահաշվարկվելու) և վճարվելու կամ նպաստ նշանակելը մերժվելու (մերժման հիմքերի) մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ինքնաշխատ եղանակով համակարգի միջոցով պատշաճ կարգով ծանուցվում է դիմող անձին՝ դիմումում նշված էլեկտրոնային հասցեին ծանուցում ուղարկելու միջոցով:

22. Եթե անաշխատունակությունն առաջացել է հղիության և ծննդաբերության պատճառով, ապա համապատասխան մարմինը անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում նշված անձ հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվությունը համակարգի միջոցով տրամադրում է ծառայությանը անկախ սույն կարգի 13-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալու հանգամանքից:

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՆՊԱՍՏԻ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում է «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 27-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնից ստացված՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստը և մայրության նպաստը (այսուհետ՝ երկուսը միասին՝ նպաստ) նպաստը հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվության (տվյալի) փոփոխության հիման վրա վերահաշվարկված նպաստի ավել վճարված գումարը գործատուի կողմից պետական բյուջե վերականգնելուն առնչվող հարաբերությունները:

2. Վարձու աշխատողին նպաստը վճարելու օրվանից 3 ամիս հետո, բայց նպաստ նշանակելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի կողմից տրամադրվելու ամսվանից 36 ամսվա ընթացքում, այդ տեղեկատվության (տվյալի) փոփոխությունը ստացվելու դեպքում նպաստը վերահաշվարկվում է օրենքով սահմանված կարգով:

3. Եթե սույն կարգի 2-րդ կետում նշված վերահաշվարկի արդյունքով նպաստի չափը պակասում է, ապա ավել վճարված նպաստի գումարի՝ պետական բյուջեից վճարված չափը պետական բյուջե է վերականգնում վարձու աշխատողի գործատուն: Այս դեպքում պետական բյուջե վերականգնվող գումարի չափը հաշվարկվում է որպես ավել հաշվարկված նպաստի գումարի և դրա նկատմամբ հաշվարկված եկամտային հարկի տարբերություն:

4. Գործատուն ավել վճարված նպաստի գումարը պետական բյուջե վերականգնում է՝ հարկային մարմնից այդ տեղեկատվությունը ստանալուց հետո՝ 1 ամսվա

ընթացքում, այդ ժամկետում չվերականգնելու դեպքում՝ գրավոր դիմումի հիման վրա ծառայության հետ կնքած ժամանակացույցով՝ 3 ամսվա ընթացքում: Գործատուի՝ պետական բյուջե չվերականգնված նպաստի գումարը պետական բյուջե է բռնագանձվում դատական կարգով՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) ներկայացրած հայցի հիման վրա:

5. Վարձու աշխատողի գործատուի կողմից ավել վճարված գումարի չափը հաշվարկում է ծառայության կողմից վարվող տեղեկատվական համակարգի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով, հետևյալ կերպ՝

1) տվյալ գործատուի մասով հաշվարկվում է նպաստի չափը նախկին տվյալներով.

2) տվյալ գործատուի մասով հաշվարկվում է նպաստի չափը նոր՝ փոփոխված տվյալներով.

3) նպաստի՝ պետական բյուջե վերականգնման ենթակա (ավել վճարված նպաստի) գումարը հաշվարկվում է որպես սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով հաշվարկված գումարների տարբերություն:

6. Համատեղությամբ աշխատող վարձու աշխատողի դեպքում ավել վճարված մայրության նպաստը պետական բյուջե է վերականգնում այն գործատուն, որի ներկայացրած տվյալներում սույն կարգի 2-րդ կետում նշված ժամկետում կատարվել է փոփոխություն: Այս դեպքում յուրաքանչյուր գործատուի (ում ներկայացրած տվյալներում կատարվել է փոփոխություն) կողմից ավել վճարված գումարի չափը հաշվարկվում է սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով:

7. Ավել վճարված նպաստի գումարը պետական բյուջե վերականգնելու մասին գործատուն տեղեկացվում է օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկատվությունը հարկային մարմնից (հարկային մարմնի տեղեկատվական բազայից) ստանալու միջոցով:

8. Ավել վճարված նպաստի գումարը հարկային մարմնի միջոցով ծանուցվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում պետական բյուջե չվերականգնելու դեպքում

ծառայությունը գործատուին ծանուցում է՝ հաղորդագրություն ուղարկելով գործատուի էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ դրա բացակայության դեպքում՝ նաև հետադարձ կապի բջջային հեռախոսահամարին կամ փոստային առաքմամբ և տեղեկացնում է նրա կամ նրա անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի՝ ծառայության ցանկացած տարածքային կենտրոն ներկայանալու և այդ գումարը պետական բյուջե վերականգնելու ժամանակացույց կնքելու անհրաժեշտության մասին:

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման

Կ Ա Ջ Մ

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով սահմանված կարգով նպաստ հաշվարկելու, նշանակելու, վճարելու համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը վարում է տեղեկատվական շտեմարան, որը ներառում է էլեկտրոնային առողջապահության համակարգում ժամանակավոր անաշխատունակության թերթիկ ունեցող անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները՝

1) անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում).

2) ծննդյան օրը, ամիսը, տարին.

3) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) առկայության դեպքում՝ հետադարձ կապի համար էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման N 3 հավելվածով սահմանված՝ իր կողմից վարվող տեղեկատվական համակարգի, էլեկտրոնային առողջապահության համակարգի և հարկային մարմնի կողմից վարվող տեղեկատվական բազայի միջև փոխանակված տեղեկատվությունը (տվյալները).

6) նպաստ նշանակելու, հաշվարկելու, վճարելու համար դիմում (այսուհետ՝ դիմում) ներկայացնելու օրը, ամիսը, տարին, դիմումի հերթական համարը.

7) դիմումով ներկայացված տվյալները և ներկայացված փաստաթղթերի լուսապատճենները.

8) դիմումի հիման վրա, ըստ անհրաժեշտության, հարցում կատարելու օրը, ամիսը, տարին, հարցմամբ հայցվող տվյալները.

9) կատարված հարցման պատասխանը ստանալու օրը, ամիսը, տարին, պատասխանով տրամադրված տվյալները.

10) դիմումում նշված բանկի անվանումը, որտեղից անձը ցանկանում է ստանալ նպաստը.

11) դիմումի պատասխանը և այն դիմումատուին ծանուցելու օրը, ամիսը, տարին.

12) դիմումի հիման վրա հաշվարկված նպաստի գումարի չափը.

13) դիմումի հիման վրա վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ պետական բյուջեից և գործատուի կողմից վճարման ենթակա գումարների չափերը.

14) վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կողմից պետական բյուջե վերադարձված նպաստի գումարը, պետական բյուջե վերադարձնելու օրը, ամիսը, տարին, գանձապետական հաշվի համարը, այդ գումարը պետական բյուջեից փոխանցելու օրը, ամիսը, տարին.

15) վարձու աշխատողի գործատուի կողմից պետական բյուջե վերադարձված նպաստի գումարը, պետական բյուջե վերադարձնելու օրը, ամիսը, տարին, գանձապետական հաշվի համարը, այդ գումարը պետական բյուջեից փոխանցելու օրը, ամիսը, տարին:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ